ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ԷԹՆԻԿ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ*

ՀՏԴ 94.574

Պողոսյան Աստղիկ
Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի
Թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն,
astghikpoghosyan96@gmail.com

Ներկայիս ադրբեջանցիների՝ կովկասյան թյուրքերի մոտ որպես էթնիկ ընդհանրություն ինքնաճանաչողության սաղմնավորումը, համընկնելով գլոբալ ասպարեզում ընթացքող ազգաստեղծման գործընթացներին, ակնհայտորեն կրում է օսմանա–թուրքական ազդեցություն և ուղղորդում: Գործընթացն իր ամենավաղ փուլում դրսևորվեց կովկասյան թյուրքերի մոտ՝ կրոնական ինքնագիտակցության փոխարեն էթնիկ ընդհանրության գիտակցման գերակայությամբ՝ ադրբեջանցիների՝ համաթյուրքական ընտանիքի մաս կազմելու թեզի հիման վրա: Ըստ այդմ, կարող ենք ասել, որ ադրբեջանցիների մոտ ինքնաճանաչողության սաղմնավորումը սերտաճած էր պանթյուրքիստական գաղափարներին: Պանթյուրքիզմի առաջին առանցքային գաղափարախոսներից է հանդիսանում ծագումով ադրբեջանցի գրող, հասարակական–քաղաքական գործիչ Ալի բեյ Հուսեյնզադեն, ով մեծ հետք է թողել ինչպես կովկասյան թյուրքերի համախմբման, այնպես էլ գաղափարախոսության հետագա զարգացման ու բյուրեղացման վրա: Պանթյուրքիզմի հայր, սոցիոլոգ Զիյա Գյոքալփը, կրելով Ալի Հուսեյնզադեի գաղափարական ազդեցությունը, նոր մակարդակի հասցրեց գաղափարախոսությունը՝ նախանշելով թուրքական ու ադրբեջանական պետությունների հետագա գաղափարական ուղին: Հենց այս գաղափարախոսների հայացքները Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի կողմից դրվեցին 1923թ. Թուրքիայի Հանրապետության գաղափարախոսական հիմքում: Ներկայիս աշխարհաքաղաքական վերածնումների ֆոնին էլ պանթյուրքիզմի նոր դրսևորումները ցայտուն կերպով արտացոլվում են հարևան Թուրքիայի ու Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ՝ այդ թվում ՀՀ դեմ:

Բանալի բառեր՝ *ինքնագիտակցություն, պանթյուրքիզմ, ազգաստեղծում, լուսավորություն, ջադդիստական շարժում, Ալի բեյ Հուսեյնզադե, Զիյա Գյոքալփ:*

Հարավային Կովկասի թյուրքական ժողովուրդների կամ այսօրվա ադրբեջանցիների մոտ էթնիկ ինքնագիտակցության ձևավորումը վերաբերում է 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկզբներն ընկած ժամանակահատվածին, երբ վերջիններիս ինքնագիտակցության մեջ նախ և առաջ տեղի է ունենում ինքնաճանաչողության փոփոխություն՝ կրոնական համայնքից դեպի էթնիկ ընդհանրություն՝ աստիճանաբար ստանալով

*Հոդվածը ներկայացվել է 17.09.2022:
Տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մելքոնյանը: 23.09.2022
Հոդվածը տպագրության է ընդունվել 5.10.2022:

թյուրքականության տարրեր՝ կովկասյան թյուրքական և թուրք մտավորականության ուղղորդմամբ: Նշված գործընթացները պայմանավորող գործոններն էին մի կողմից համաշխարհային զարգացումները, այդ թվում՝ եվրոպական երկրներում «ազգ» և «ազգայնականություն» հասկացությունների ծնունդը, մյուս կողմից Կովկասում արձանագրվող սոցիալ–տնտեսական գործընթացները, ինչպես նաև Օսմանյան կայսրության շուրջ տեղի ունեցող զարգացումները:

Այսպես, 18-րդ դարի վերջից Արևմտյան Եվրոպայի քաղաքական, մշակութային ու տնտեսական կյանքում կարևոր դեր է ստանձնում ազգայնականության գաղափարախոսությունը, որը իբրև շարժիչ ուժ տանում է տարբեր կազմավորումների մեջ ապրող ժողովուրդներին դեպի ազգային պետությունների ստեղծումը: Ամերիկացի փիլիսոփա, ազգ և ազգայնականություն հասկացությունների նշանավոր տեսաբաններից Հանս Կոնի բնորոշմամբ 18-րդ դարի վերջին ու 19-րդ դարի սկզբին ազգայնականությունը դարձավ ընդհանուր մտավոր վիճակ համաշխարհային մասշտաբներով[1]: Որպես նման փոփոխությունների բնական հետևանք եվրոպական մտավորականության կողմից ներմուծվում են այնպիսի նոր գաղափարներ, ինչպիսիք են մարդու իրավունքները, ազգային պետությունը, մեկը մյուսի հետևից տեղի են ունենում հեղափոխություններ՝ ամերիկյան, ֆրանսիական: Նապոլեոն Բոնապարտի բանակը ազգայնական գաղափարները սփռում է ողջ Եվրոպայում: Քաղաքացիների մոտ արթնանում են ազգ, ծննդավայր, հայրենիք հասկացությունները: Ազգ բառը ֆրանսերեն մեկնաբանությամբ սահմանվում էր որպես մի տարածքում ապրող մարդկանց ամբողջություն, որը համախմբված է ընդհանուր շահի շուրջ մասնավորի դեմ, բաղկացած է ազատ մարդկանցից, ովքեր պաշտպանված են օրենքով և տվել են իրենց համաձայնությունը ղեկավարվելու նույն պետության կողմից[2]: Ազգայնականության ծագման այլ օրինակ դրսևորվում էր Գերմանիայում: Ամերիկացի գիտնական Լուիս Լեո Սնայդերը գտնում է, որ գերմանական ազգայնականությունը ձևավորվել է ի պատասխան Նապոլեոնի գործողությունների ընդդեմ Գերմանիայի[3]:

Եվրոպայում տեղի ունեցող այս գործընթացները իրենց ազդեցությունն են ունենում աշխարհի այլ տարածաշրջանների, այդ թվում երեք բազմազգ Օսմանյան, Ռուսական ու Ավստրո–Հունգարական կայսրությունների վրա: Հաշվի առնելով, որ այն հանգամանքը, որ 19-րդ դարում Ռուսական կայսրության տիրապետության տակ ապրում էին թյուրքական ծագման բազմաթիվ մուսուլմաններ, նրանք ևս անմասն չէին կարող մնալ ազգայնականության տարածվող գաղափարներից:

Ներկովկասյան ազդակների առումով արժանահիշատակ են լեհ պատմաբան, հարավկովկասյան տարածաշրջանի ու Ադրբեջանի պատմության մասնագետ Թադեուշ Սվետախովսկիի դիտարկումները, համաձայն որոնց՝ ադրբեջանցիների մոտ ազգաստեղծման շրջանը (Nation-building) կապվում է ադրբեջանական բյուրոկրատիայի ծագման հետ, ինչն էլ իր հերթին պայմանավորված էր խանությունների վերացման ու երկու պրովինցիաների ստեղծման գործընթացով 1840-1860-ական թվական-

[1]Kohn H., The Idea of Nationalism, A study in its Origins and Background, 2d ed. (New York: Collier, 1967) p.24.
[2]Snyder L., Encyclopedia of Nationalism, New York, 1990, p. 102-105.
[3]Նույն տեղում, էջ 11:

ներին[1]: Այն օգնեց տարածքային միասնություն սահմանելուն, հատուկ տարածքի հետ կապված ընկալումները դարձան կարևոր նախադրյալ ինքնաճանաչողության տեսանկյունից: Ադրբեջանցիները և հատկապես մտավորականությունը սկսեցին տեսնել կորիզ, որի շնորհիվ կարող են համախմբել բնակչությանը «հայրենիքի» գաղափարի շուրջ: Մյուս կողմից կովկասյան թյուրքերի շրջանում լուսավորչական էլիտայի ձևավորման վրա իր ազդեցությունը թողեց սոցիալ–տնտեսական մթնոլորտը: 1870-ականներին սկզբին նավթի արդյունահանման ծավալների շեշտակի աճը Բաքուն դարձրեց մի նոր կենտրոն, որտեղ բախվում էին տարբեր ժողովուրդների շահերը: Այս շրջանում էր, որ ադրբեջանցի մուսուլմանները, շարունակաբար հանդիսանալով Բաքվի ամենաաղքատ ու սոցիալական կյանքից դուրս մնացած խավ՝ ի տարբերություն մյուս երկու խոշոր խմբերի՝ հայերի ու ռուսների, սկսեցին տիրապետել սոցիալ–տնտեսական որոշակի լծակների[2], ինչն էլ իր հերթին աստիճանաբար հանգեցրեց գործարարներից, ներդրողներից ու քաղաքական դեմքերից բաղկացած ադրբեջանական էլիտայի ձևավորմանը, որոնց շուրջ համախմբվելով՝ մտավորականները սկսեցին սաղմնավորել լուսավորչական գործունեությունը ադրբեջանցիների շրջանում, ովքեր միաժամանակ կրում էին իսլամական ու եվրոպական քաղաքակրթությունների ազդեցությունը և նրանց գաղափարները սկզբնական շրջանում հայեցակարգային դրույթների չէին վերածվում, այլ ավելի շուտ նմանվում էին ինքնության փնտրտուքի կամ դրա ուրվագծմանը:

Այսպես, ադրբեջանցիների մոտ ազգային գիտակցության սաղմնավորման գործում ներդրում ունեցած առաջին մտավորականներից էին Միրզա Ֆաթհալի Ախունդովը (1812-1878 թթ.) և Հասան բեյ Զարդաբին (1842-1907 թթ.): Ախունդովը առաջիններից էր, որ քննադատությամբ էր հանդես գալիս կրոնական գործոնի նկատմամբ և քարոզում էր ազգային գիտակցության ձևավորման գաղափարներ, միաժամանակ զգուշավորություն դրսևորելով՝ այս շրջանում ադրբեջանցիների համար դեռևս օգտագործում էր «մուսուլմանական ազգ» եզրույթը[3]: Վերջինս առաջ էր քաշում լեզվական խնդիրը՝ փորձելով պարզեցնել խոսակցական լեզուն և իր երկերում օգտագործելով պարզունակ թուրքերեն, որը հասկանալի կլիներ հասարակ ժողովրդի համար՝ նույնիսկ քարոզելով անցնել լատինատառ այբուբենի: Ախունդովը աշխարհիկությունը ներկայացնում էր որպես հակաթույն սեկտայական բաժանումներին՝ հիմք դնելով լուսավորական շարժմանը ադրբեջանական հասարակության մեջ[4]: Այսպիսով, Ախունդովի կողմից բարձաձայնվում էին ազգաստեղծման ու ազգային գաղափարների արմատավորման համար կենսական խնդիրները, որոնք հետագայում էլ ավելի կատարելագործվելով պիտի տեղ գտնեին թյուրքականության նշանավոր տեսաբանների, այդ թվում՝ Զիյա Գյոքալփի մշակած հայեցակարգերի մեջ՝ նյութականանալով Աթաթյուրքի բարեփոխումներով:

[1]Çağla C., Natino-Building in Southern Caucasus: The Case of Azerbaijan (1900-1920), Journal of Balkan and Black Sea Studies, Year 2, Isse 2, p.37.
[2]Suny R., Nationalism and Social Class in the Russin Revolution: the Cases of Baku and Tiflis, 1980, p.9.
[3]Süleymanli E., Milletleşme sürecinde Azerbaycan Türkleri rus işğalinden günümüze osyolojik bir değerlendirme İstanbul, 2006, s.142.
[4]Swietochowski T., National Consioussnes and Political Orientations in Azerbaijan, 1905-1920,1980, p.2.

Լուսավորական գաղափարների սաղմերը ավելի հիմնավոր հող են գտնում ջադիդիստական շարժման համատեքստում՝ ղրիմի թաթար Իսմայիլ Գասպիրալիի առաջնորդությամբ, ով մեծ դերակատարում է ունեցել 19-րդ դարի կեսերից արդեն Ռուսաստանի մուսուլմանների մոտ նկատվող զարթոնքի շարժման համակարգման հարցում: Վերջինիս գաղափարական ձևավորման վրա ազդեցություն է ունեցել երեք միջավայր. Ֆրանսիայում գտնվելու ժամանակ շփումների մեջ է եղել պանսլավոնական գաղափարախոսության կրողների հետ, Օսմանյան կայսրությունում՝ Genç Osmanlı (երիտասարդ օսմաններ) շարժման ներկայացուցիչների (Նամըք Քեմալ, Իբրահիմ Շինասի, Զիյա փաշա), իսկ 1860-1870-ականներին Ստամբուլում պանիսլամական շարժման ակտիվիստների հետ[1]: Նա նախաձեռնում է կրթական բարեփոխումներ, որոնք ավելի խորքային բնույթ ունեին, քան զուտ կրթական կողմը: Ուսուցանման Գասպիրալիի ստեղծած «նոր մեթոդը» (usul-i cedid) դարձավ բազմակողմ մի ծրագրի հիմնաքարը, որը ծնունդ տվեց ջադիդիստական շարժմանը՝ իսլամական մոդեռնիզմին[2]: «Նոր մեթոդով» Գասպիրալին բարձրացրեց աշխարհիկ կրթության ու մեդրեսեների բարեփոխումների հարցերը: 1884 թ. ընթացքում ջադիդիստականները (նոր մեթոդականներ, նրանց ընդդիմախոսներին անվանում էին քադիմիստականներ՝ հին մեթոդականներ) ծրագրում է ստեղծել դպրոց, որտեղ աշակերտները պետք է ուսանեին իրենց մայրենի լեզվով: Նրանց պետք է թույլատրվեր հնարավորինս կարճ ժամկետներում սովորել գրել ու կարդալ թուրքերենով: Բացի դրանից, նոր մեթոդը ենթադրում էր, որ Ղուրանի դասերից բացի դասավանդվելու էր թուրքերենի քերականություն, իսլամի պատմություն, աշխարհագրություն, համաշխարհային պատմություն, հիգիենա: Ահա այս նորարարություններն էին դրված առաջին ջադիդիստական դպրոցի հիմքում, որը Գասպիրալին բացեց Ղրիմում՝ Բաղչեսարայի Քայմազ Աղա թաղամասում[3]:

1883 թվականից Ի. Գասպիրալիի կողմից սկսվել է «Tercüman» (Թարգմանիչ) թերթի հրատարակումը՝ ադրբեջանական բուրժուազիայի առաջատար դեմքերից Զեյնել Աբդուլ Թաղիևի ֆինանսավորմամբ, որը դառնում է նորարարական, պանթուրքիստական ազգայնականության գաղափարների խոսափող[4]: «Tercüman»-ում Գասպիրալին առաջ է քաշում մուսուլմանների միասնականության գաղափարները՝ «Միասնություն լեզվով, մտքով ու գործով» կարգախոսով: Միասնականություն հասկացության տակ ենթադրվում էր Ռուսաստանի մուսուլմանների միասնականություն, սակայն քանի որ մուսուլմանների մեծամասնությունը թյուրքական ծագում ուներ, Գասպիրալլի կարգախոսը միաժամանակ հանգում էր Ռուսաստանի թյուրքերի (մուսուլման թյուրքերի) միասնությանը[5]՝ ընդհանուր լեզու (Lisan-i umumi) դիտարկելով Ղրիմի թաթարերենը, որը պետք է մաքրվեր ռուսերեն, արաբերեն ու ֆրանսերեն բառաֆոնդից՝ փոխա-

---

[1]Tokluoğlu C., Ziya Gökalp: Turancılıktan Türkçülüğe, Atatürk araştırma merkezi Dergisi, Cilt XXVIII-Sayı 84, 2012, p.112.

[2]Lazzerini E., Ismayil Bey Gasprinski and muslim Modernism in Russia, University of Washington, 1973, p.14.

[3]Նույն տեղում, էջ 27.

[4]Çağla C., Natino-Building in Southern Caucasus: The Case of Azerbaijan (1900-1920), Journal of Balkan and Black Sea Studies, Year 2, Isse 2, 2019, p.38.

Ռուսաստանում առաջին մուսուլմանական թերթը՝ «Էքինջին» լույս է տեսել 1875-1877թթ. Բաքվում՝ Հասան Բեյ Մելիքով Զարդաբիի ջանքերով, տես՝ Lazzerini E., 1973, p.11.

[5]Kirimli H., Ismail Bey Gaspirali, Türklük ve islam Doğu Bati, Yıl 8, Sayı 31, 2005, s. 147-149.

րինելով այն թուրքերենով՝ որպես օսմանյան թուրքերենի և թաթարերենի խառնուրդ: «Tercüman»-ի էջերում Գասպիրալին անդրադառնում էր նաև իսլամական աշխարհի հետադիմությանը Արևմուտքի հետ համեմատությամբ, կրոնի հարցին նոր լույսի ներքո անդրադարձի անհրաժեշտության, դպրոցները բարեփոխելու, կնոջ հավասարության և այլ առաջադիմական հարցերի:

Ընդհանուր առմամբ Գասպիրալիի գաղափարների առանցքը Ռուսական կայսրության թյուրքերի կրոնական, մշակութային, լեզվական միասնությունն ու իսլամական աշխարհի հզորացումն էր, սակայն ակնհայտ է, որ Գասպիրալիի քարոզները չէին սահմանափակվում միայն մուսուլմանների իրավունքների պաշտպանության ու մշակութային միասնության «անմեղ» գաղափարներով, այլ պարունակում էին ոչ միայն իսլամական աշխարհի շահերի առաջմղման քաղաքական ենթատեքստ, այլև պանթյուրքիստական գաղափարախոսության սաղմերը: Նշվածի մասին է վկայում Գասպիրալիի՝ 1908 թ. իր փեսային հասցեագրած նամակը. «...այլ թերթի բացակայության պայմաններում «Tercüman»-ը պետք է վերածվի քաղաքական թերթի՝ սկսելով սառը, հաշվարկված և հաստատուն արշավ ընդդեմ թյուրք ժողովրդի ներքին և արտաքին թշնամիների ու խոչընդոտների»[1]:

Հատկանշական է, որ եթե Գասպիրալիի հայացքներում թյուրքական աշխարհի համախմբման քարոզչությունը դրսևորվում է իսլամական ժողովուրդների միավորման կրոնական երանգներով, ապա հաջորդ գործիչների տեսակետներում անթաքույց կերպով արտահայտվում են պանթյուրքիստական ազգայնամոլական գաղափարախոսության բաղադրիչները:

Ժամանակի ադրբեջանցի մտավորականներից Ալի բեյ Հուսեյնզադեն (1864-1941թթ.) առաջինն էր, ով սկսում է ակտիվորեն շեշտադրել թյուրքական ժողովուրդների, այդ թվում՝ Կովկասի ադրբեջանցիների ծագումնաբանական ընդհանրության գաղափարը՝ որպես նրանց կենսունակության ու գոյապայքարի առանցքային բաղադրիչ: Վերջինս ինչպես ադրբեջանական, այնպես էլ թուրքական հասարակության մեջ ընկալվում է որպես թյուրքականության գաղափարախոսության առաջին հիմնադիրներից, ով մեծ ավանդ է ունեցել թյուրք ազգայնամոլության հիմնավորման ու առաջմղման գործում: Պատահական չէ, որ ծագումով ադրբեջանցի Ալի բեյ Հուսեյնզադեն, ով հայտնի է Հուսեյնզադե Ալի Թուրան անունով[2], ապրելով ու կրթություն ստանալով Ստամբուլում, հանդիսացել է երիտթուրքական շարժման ձևավորման ակտիվիստներից, «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար կազմի անդամ:

Այսպես՝ ռուսական ու իրանական մշակույթների միջև տատանվող ադրբեջանցիների համար Ա. Հուսեյնզադեի մատուցած առաջին ծառայություններից էր ինքնության փնտրտուքի ուղորդում՝ ազգի ինքնագիտակցության զարթոնքի ճանապարհը դիտարկելով թուրքական պատմության, լեզվի և քաղաքակրթության վերաարժևորման միջոցով: Ա. Հուսեյնզադեն սկսում է արմատավորել այն գաղափարը, որ «Հարավային

[1]Lazzerini E., Ismayil Bey Gasprinski and muslim Modernism in Russia, University of Washington, 1973, p.105.

[2]1892 թվականից հանդես է գալիս նշված ստորագրությամբ, տես՝ Turan A., Əli bey Hüseynzadə, Moskva, Salam press, 2008, s.18.

Կովկասի մուսուլմանները թյուրք են»[1]: 1905թ. հունիսի 10-ից Հուսեյնզադեն «Հայաթ» թերթում սկսում է հրատարակել հոդվածաշար՝ «Ովքե՞ր են թյուրքերը և ումի՞ց են բաղկացած» վերնագրով: «Մեր մեջ կան մարդիկ, ովքեր չգիտեն, որ ուզբեկները, ղրղզները, բաշկիրները թյուրք են: Ունենք բազմաթիվ գրողներ, ովքեր հպարտ լինելով, որ թյուրք են, տեղյակ չեն, թե ովքեր են թյուրքերը և ումից են բաղկացած»,- գրում է Ա. Հուսեյնզադեն[2]՝ միաժամանակ սահմանելով թյուրքական ու իսլամական ժողովուրդների միասնության գաղափարը[3]: Այս միասնության գաղափարը Ալի Հուսեյնզադեն հիմնավորել է իր «թյուրքականացում, իսլամականացում և եվրոպականացում» եռամիասնության հայեցակարգում՝ որպես թյուրքերի զարգացման ուղենիշային համակարգ, ինչն էլ իր մեծ ազդեցությունն է ունեցել թյուրքականության նշանավոր տեսաբան, սոցիոլոգ Զիյա Գյոքալփի գաղափարական կայացման վրա: Այս հայեցակարգը ենթադրում էր, որ «մտածողությունն ուղղորդվում է թյուրքական կենսաձևով և իսլամական պաշտամունքով: Միաժամանակ, այն ներառում է ժամանակակից Եվրոպայի քաղաքակրթության օգուտները»[4]: Հուսեյնզադեն առաջարկում էր նաև ադրբեջանցի թուրքերի միավորում օսմանյան կայսրությանը, որպեսզի վերջնականապես լուծվեն աշխարհագրական բաժանման հարցերը՝ իրենց առաջացրած հետևանքներով[5]:

Ա. Հուսեյնզադեի և ադրբեջանցի գրող Ահմեդ Աղաօղլուի կողմից հրատարակվող «Հայաթ» և «Ֆույուզաթ» թերթերը դառնում են 20-րդ դարասկզբի ադրբեջանական ինքնության զարթոնքի գաղափարական խոսափողը: «Ֆույուզաթ» թերթում Հուսեյնզադեն, ներկայացնելով իր պատկերացրած միասնականությունը, գրել է. «Թյուրքական արյունով, իսլամական հավատարմությամբ, ֆռանգի մտածելակերպով, եվրոպացու հագուստով նվիրյալ է անհրաժեշտ»[6]:

Թյուրքականության գաղափարի ենթատեքստում ամրագրում է այն դրույթը, որ Ադրիատիկ ծովից մինչև Չինաստան բոլոր թյուրքալեզու ժողովուրդները պետք է միավորվեն մեկ թյուրքական միության մեջ: Դրա առաջին գործոնը պետք է լինի լեզվական միասնությունը[7]: Մինչև Հունգարիա թյուրքական ժողովուրդների սփռման ու թյուրքական տարածքների գյոքալփյան թեզը առաջին անգամ ևս հանդիպում ենք Հուսեյնզադեի մոտ: Թուրք գրող Յուսուֆ Աքչուրան նշում էր, որ Հուսեյնզադեն միակ գրողն էր, որ այդ շրջանում բացահայտորեն խոսում էր հունգարների հետ միավորման մասին: Հուսեյնզադեի բանաստեղծությունը ստորև.

Դո՛ւք, հունգարնե՛ր մեր եղբայրներն եք,
Մեր բոլորի նախապապերի արմատները Թուրանից են

---

[1]Uzer U., Ali Bey Hüseynzade and his impact on national thought in Turkey and the Caucasus, Acta Via Serica Vol.3, No. 2, 2018, p. 138.
[2]Hüseynzade A., Türkler kimdir ve kimlerden ibarettir, Hayat 77, 1906.
[3]"Müsülmaniz, onun için dünyanin her neresinde heyrhani bulunduğunumuz din gardaşlarimiz terakki etse biz o terakkinin az canu din algişlardız Türküz, binaaneleyh Türküz. Türkün her yerde terakki ve tekamül ile mesudiyet ve refahiyet dileriz!" Sեu՝ A.B. Huseynzade, "Gazetemizin Mesleki", Hayat 1, 1905
[4]Çağla C., Natino-Building in Southern Caucasus: The Case of Azerbaijan (1900-1920), Journal of Balkan and Black Sea Studies, Year 2, Isse 2, 2019, p.43.
[5]Süleymanli E., Milletleşme sürecinde Azerbaycan Türkleri rus işğalinden günümüze osyolojik bir değerlendirme İstanbul, 2006 p. 89.
[6]Turan A., Əli bey Hüseynzadə, Moskva, Salam press, 2008y., s. 70.
[7]Hikmet B. Y., Türk inkilapi tarihi, Ankara, 1963, s.35.

Մենք պատկանում ենք միևնույն կրոնին, Աստծու բոլոր երկրպագուներս,
Կարո՞ղ են արդյոք Աստվածաշունչն ու Ղուրանը բաժանել մեզ[1]:

Հուսեյնզադեն առանձնացնում էր երեք թյուրքական համայնք՝ Սիբիրի թյուրքեր, Անատոլիայի ու Եվրոպայի թյուրքեր և Հարավային Կովկասի թյուրքեր և քարոզում նրանց միջև սերտ կապերի հաստատման գաղափարը՝ համալսարանների, ասոցացիաների ստեղծման ճանապարհով, ինչը կտաներ թյուրք ազգի պատմության ու ծագման շուրջ լուրջ ուսումնասիրությունների անցկացմանը[2]: Այսպիսով, Հուսեյնզադեն առանցքային դերակատարում է ունեցել թուրանականության հիմնական դրույթների ձևավորման գործում, ինչը համակարգված հայեցակարգի վերածվեց Զ.Գյոքալփի ջանքերով՝ մեծ ազդեցություն ունենալով թե՛ Թուրքիայի և՛ թե Ադրբեջանի որպես պետություն կայացման գաղափարական հենքի վրա:

Վերոնշվածի համատեքստում Գյոքալփի կյանքի ու գործունեության վերաբերյալ ինքնակենսագրական նյութերի ուսումնասիրությամբ արձանագրվում է, որ վերջինս մեծապես կրել է Ա.Հուսեյնզադեի գաղափարական ազդեցությունը: Զ. Գյոքալփն ինքը Հուսյենզադեին անվանել է մարգարե: Իսկ «Թյուրքականության հիմունքները» գրքում Գյոքալփն գրել է, որ 1896 թ. Ստամբուլ գալով՝ շփվել է Հուսեյնզադեի հետ և սերտել նրա հայացքները պանթյուրքիզմի մասին[3]: Ժամանակի պանթյուրքիստական մտքի կերտողների վրա Հուսեյնզադեի ազդեցության մասին վկայել է նաև Թադեուշ Սվետախովսկին. «...Պանթյուրքիզմի մշակութային շրջանակներում առաջին քայլը կատարողը ադրբեջանցի Ալի Հուսեյնզադեն է...Ալի բեյի Թուրան բանաստեղծության համանուն ստորագրությամբ թեկուզ և մի բուռ գրվածքները որոշ մտավորականների վրա ներգործելով ավելի մեծ հաջողություն ունեցան: Նրանց շարքում Մեհմեդ Էմին Յուրդաքուլը և Զիյա Գյոքալփը նրան (Հուսեյնզադե Ալի բեյին-խմբ.) շատ բան են պարտական»[4],- գրել է նա:

Զիյա Գյոքալփը թուրանականության հոսանքի առաջին ազդականչը լսել է Հուսեյնզադեի «Թուրան» բանաստեղծության տողերում, իսկ դրա ազդեցությամբ գրված Գյոքալփի համանուն ներքոհիշյալ բանաստեղծությունը ավելի մեծ ազդեցություն է գործել ժամանակի թուրք մտավորականության վրա.

Հայրենիքը թյուրքերի ոչ Թուրքիան է, ոչ էլ Թուրքիստանը,
Հայրենիքը մեծ ու հավիտենական մի երկիր է՝ Թուրանը...[5]

Զիյա Գյոքալփի վրա Հուսեյնզադեի գաղափարական ազդեցության դրսևորումները ուսումնասիրենք ակնհայտ օրինակներով: Երկուսն էլ հանդես էին գալիս որպես

---

[1]Sizlersiniz ey kavm-i Macar bizlere ihvan
Ecdadımızın müştereken menşei Turan
Bir dindeyiz biz, hepimiz hakperestan,
Mümkün mü ayırsın bizi İncil ile Kuran.
Alaattin U., Dr. Hüseynzade Ali Bey, Turk Yurdu dergisi, sayi 288, 2011, www.turkyurdu.com.tr/yazar-yazi.php?d=1578 (21.05.2021).
[2]Hüseynzade A., Türkler, Hayat 22, 1905.
[3]Gökalp Z., Türkçülüğün esasları, Ankara, 2019, s.11.
[4]Swetochowski T., Müsülman Cemaatten Ulusal Kimliğe Rus Azerbaycanı, 1905-1920, İstanbul, 1988, s.52-53.
[5]"Vatan ne Türkiyedir Türklere, ne Türkistan
Vatan büyük ve müebbet bir ülkedir Turan..."
Uca A., Ziya Gökalp ve ona türkçülüğü aşılayan Adam:Hüseynzade Ali Bey, Atatürk Üniversitesi Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi, Sayi 8, 2010, s. 170.

թուրանականության ջատագով՝ դրա մի փուլ դիտարկելով թյուրքիզմը: Թուրանը պետք է ընդգրկեր բոլոր թյուրքալեզու պետություններին՝ համախմբելով միասնական արժեքների շուրջ: Զիյա Գյոքալփը իր «Թյուրքականության հիմունքները» գրքում հանդես է գալիս որպես մշակութային թյուրքականության քարոզիչ՝ մերժելով ցեղային ու աշխարհագրական ձևերը[1]: Որպես թուրանականության գաղափարի միասնությունը ապահովող գլխավոր գործոն երկուստեք դիտարկվում էր լեզվական ընդհանրությունը՝ հենվելով հետևյալ երեք սկզբունքի վրա՝ նույն երկրի տարբեր շրջանների բարբառների միջև տարբերությունների վերացում, Ստամբուլի թուրքերենի տարածում Ադրբեջանում, թյուրքական ազգին պատկանող տարբեր ժողովուրդների միջև լեզվական տարբերությունների վերացում և արդյունքում առանձին համաթուրքական լեզվի ստեղծում[2]: Վերոնշյալ գաղափարները բարեփոխումներն իրենց արտացոլումը գտան Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալի լեզվական բարեփոխումներում: Ուշագրավ է նաև, որ Քեմալի լեզվական բարեփոխումների գործընթացում ներգրավվել է նաև Ա. Հուսեյնզադեն, իսկ 1933 թ. նշանակվել Թուրքիայի կրթության նախարար, տարբեր միջազգային հարթակներում որպես թյուրքագետ ներկայացրել է Թուրքիայի շահերը:

Միասնության ապահովման հաջորդ հանգույցը Հուսեյնզադեն ու Գյոքալփը տեսնում էին դասակարգային ու կրոնական՝ իսլամի ուղղությունների տարբերությունների հարուցած խնդիրները լուծելու մեջ: Հուսեյնզադեն գրում էր, որ «փրկությունը սիրո մեջ է»՝ դեմ հանդես գալով ցանկացած դասակարգային բաժանման ու պահանջելով հավասարություն բոլոր դասերի համար՝ հատկապես ճնշվածների, որպես այդպիսին ներկայացնելով ռուսական տիրապետության տակ գտնվող ադրբեջանցի թուրքերին[3]: Այս համատեքստում Հուսեյնզադեն դեմ էր արտահայտվում նաև սուննի–շիա տարբերությունների խորացմանը թուրք հասարակության մեջ հետևյալ ձևակերպմամբ. «Մենք պետք է շարժվենք դեպի միասնություն: Մենք պետք է առաջ ընթանանք դեպի միասնությունը»[4]: Դասակարգային տարանջատման բացառման հարցը Զիյա Գյոքալփը արծարծում է ոչ միայն հրապարակախոսության մեջ, այլև գրական երկերում: Ստորև ներկայացնենք հատված Զ. Գյոքալփի «Գյուղ» (Köy) բանաստեղծությունից.

Ով թուրք, գյուղդ ազատ մի բույն է,
Ագարակ (կալվածք) չէ, չունի բեյ, աղա...
Յուրաքանչյուր գյուղացի արտ ունի,
Սեփական տանը և բեյ է, և աղա (տեր ու տիրական)[5]:

Ուշագրավ է, որ դասակարգերի վերացման գաղափարախոսությունը իրավական ամրագրում է ստացել ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի Հանրապետություններում՝ հստակ արձանագրելով Հուսեյնզադե–Գյոքալփ–Քեմալ և Հուսեյնզադե–Գյոքալփ–Ռասուլզադե ազդեցության օղակների, ինչպես նաև անմիջապես Հուսեյնզադեի

---

[1]Սաֆարյան Ալ., Զիյա Գյոքալփը և թյուրքականության հիմունքները, Երևան, 2012, էջ 52.
[2]Həsənova S., Əli Bey Hüseynzadənin dilçilik görüşləri, Bakı, 2006, s. 11.
[3]Uzer U., Ali Bey Hüseynzade and his impact on national thought in Turkey and the Caucasus, Acta Via Serica Vol.3, No. 2, 2018, p. 138.
[4]Erdoğan U., Azerbaycan Matbuatında Füyüzat Dergisi, Modern türklük araştirmalar dergisi 7: 2, 2010, p. 154.
[5]Սաֆարյան Ալ., Զիյա Գյոքալփը և թյուրքականության հիմունքները, Երևան, 2012, էջ 217.

Քեմալի վրա ունեցած ազդեցությունը: Մի կողմից նշվածն արտացոլվում է 1931 թ. Հանրապետական–ժողովրդական կուսակցության ընդունված ծրագրում, որտեղ Թուրքիայի ժողովուրդը դիտվում էր որպես ոչ թե առանձին դասակարգերի հանրագումար, այլ որպես միասնական ամբողջություն, որը մասնավոր ու հասարակական կյանքում կարող էր բաժանվել տարբեր մասնագիտությունների՝ ըստ աշխատանքի բաժանման սկզբունքի[1]: Մյուս կողմից, Հուսեյնզադեի ու Գյոքալփի դասակարգերի բացառման թեզը արձանագրվում է Ադրբեջանի Առաջին Հանրապետության հիմնադիր Ռասուլզադեի հայացքներում. «Նախ և առաջ Ադրբեջանի Հանրապետության ղեկավարումը հիմնվում է բոլոր քաղաքացիների իրավունքների հավասարության վրա... Այստեղ մի դասը մյուսին չի իշխում: Մարդը ոչ հարստությամբ իրավացի է համարվում, ոչ էլ աղքատությամբ իրավազուրկ...»[2]:

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ ինչպես Հուսեյնզադեի, այնպես էլ Գյոքալփի հրապարակախոսության մեջ հանդիպող հավասարության, արդարության և այլ համամարդկային արժեքների շուրջ արծարծումները իրենց խորքային էությամբ խիստ վերապահումներով էին մոտենում մյուս ժողովուրդներին, նրանց գրվածքներում ակնհայտորեն դրսևորվում էին ազգայնամոլական սահմանումներ՝ թյուրքերի գերակայության համատեքստում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկզբներն ընկած ժամանակահատվածում կովկասյան թյուրքերի կամ այսօրվա ադրբեջանցիների շրջանում ինքնաճանաչողության փնտրտուքները հանգում են իսլամական հանրույթից էթնիկական միավորի գիտակցմանը՝ առանձնացնելով դրա կենսական այնպիսի բաղադրիչներ ինչպիսիք են ընդհանուր տարածքը, լեզուն ու աշխարհիկ բարքերը: Միաժամանակ, ավելի ուշ փուլում սաղմնավորվում են ադրբեջանցիների՝ թյուրքական ժողովուրդների մաս լինելու, համաթյուրքական համախմբման ազգայնամոլական տարրեր պարունակող գաղափարները, որոնք բյուրեղացվելով պանթյուրքիզմի ու թուրանականության հայտնի տեսաբանների կողմից գործարկվում են ադրբեջանա–թուրքական նորաստեղծ պետությունների գաղափարական կայացման նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սաֆարյան Ալ., Զիյա Գյոքալփը և թյուրքականության հիմունքները, Երևան, 2012:
2. Chağla C., Natino-Building in Southern Caucasus: The Case of Azerbaijan (1900-1920), Journal of Balkan and Black Sea Studies, Year 2, Isse 2, 2019:
3. Kohn H., The Idea of Nationalism, A study in its Origins and Background, 2d ed., New York: Collier, 1967
4. Lazzerini E., Ismayil Bey Gasprinski and muslim Modernism in Russia, University of Washington, 1973.
5. Snyder L., Encyclopedia of Nationalism, New York, 1990:

[1]Նույն տեղում, էջ 219:

[2]Rasulzade M., Asrimizin Siyavuşu, Ankara, 1989, s. 44.

6. Suny R., Nationalism and Social Class in the Russin Revolution: the Cases of Baku and Tiflis, 1980:
7. Swietochowski T., National Consioussnes and Political Orientations in Azerbaijan, 1905-1920, 1980.
8. Uzer U., Ali Bey Hüseynzade and his impact on national thought in Turkey and the Caucasus, Acta Via Serica Vol.3, No. 2, 2018,
9. Alaattin U., Dr. Hüseynzade Ali Bey, Turk Yurdu dergisi, sayi 288, 2011,
10. Ebulfez S., Milletleşme sürecinde Azerbaycan Türkleri: Rus işğaldan günümüze sosyolojik bir değerlendirme, İstanbul, 2006,
11. Erdoğan U., Azerbaycan Matbuatında Füyüzat Dergisi, Modern türklük araştirmalar dergisi 7: 2, 2010
12. Gökalp Z., Türkçülüğün esasları, Ankara, 2019
13. Həsənova S., Əli Bey Hüseynzadənin dilçilik görüşləri, Bakı, 2006
14. Hikmet B. Y., Türk inkilapi tarihi, Ankara,1963
15. Hüseynzade A., Türkler kimdir ve kimlerden ibarettir, Hayat 77, 1906
16. Hüseynzade A., Türkler, Hayat 22, 1905
17. Kirimli H., Ismail Bey Gaspirali, Türklük ve islam Doğu Bati, Yıl 8, Sayı 31, 2005
18. Süleymanli E., Milletleşme sürecinde Azerbaycan Türkleri rus işğalinden günümüze osyolojik bir değerlendirme, Ankara, 2006
19. Swetochowski T., Müsülman Cemaatten Ulusal Kimliğe, Rus Azerbaycanı 1905- 1920, İstanbul, 1988
20. Tokluoğlu C., Ziya Gökalp: Turancılıktan Türkçülüğe, Atatürk araştırma merkezi Dergisi, Cilt XXVIII-Sayı 84, s.104-143, 2012.
21. Turan A., Əki Bəy Hüseynzadə, Moskva, 2008.
22. Rasulzade M., Asrimizin Siyavuşu, Ankara, 1989.
23. Uca A., Ziya Gökalp ve ona türkçülüğü aşılayan Adam:Hüseynzade Ali Bey, Atatürk Üniversitesi Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi, Sayı 8, 2010

REFERENCES

1. Alaattin U., Dr. Hüseynzade Ali Bey, Turk Yurdu derġisi, (Dr. Huseynzade Ali Bey, Turk Yurdu magazine) sayi 288, 2011, (in Turkish)
2. Erdoghan U., Azerbayjan Matbuatinda Füyüzat Derġisi, Modern türklük arashtirmalar derġisi 7: 2 (Füyüzat Magazine in Azerbaijan Press, Journal of Modern Turkish Studies 7: 2), 2010 (in Turkish)
3. Ġökalp Z., Türkchülüghün esaslari, (Basics of Turkism, Ankara) Ankara, 2019 (in Turkish)
4. Häsänova S., Äli Bey Hüseynzadänin dilchilik ġörüshläri, Bakı, (Linguistic views of Ali Bey Huseynzade), Baku 2006 (in Turkish)
5. Hikmet B. Y., Türk inkilapi tarihi, Ankara (History of the Turkish revolution, Ankara), 1963 (in Turkish)
6. Hüseynzade A., Türkler kimdir ve kimlerden ibarettir, Hayat 77, (Who are the Turks and who are they consist of, Hayat 77) 1906 (in Turkish)

7. Hüseynzade A., Türkler, Hayat 22, (The Turks, Hayat 22) 1905 (in Turkish)
8. Kirimli H., Ismail Bey Ġaspirali, Türklük ve islam, Doghu Bati (Turkishness and Islam, East West), Year 8, Issue 31, 2005 (in Turkish)
9. Rasulzade M., Asrimizin Siyavushu, Ankara, (Siyavush of our century, Ankara), 1989 (in Azerbaijani)
10. Safaryan Al., Ziya Gyoqalp'y' ev t'yurqakanut'yan himunqnery', Erevan, (Ziya Gökalp and Basics of Turkish Studies, Yerevan), 2012 (in Armenian)
11. Süleymanli E., Milletleshme sürejinde Azerbayjan Türkleri, rus ishghalinden ġünümüze sosyolozhik bir degherlendirme, Ankara (Azerbaijan Turks in Nationalization Process, a sosiological evaluation from the Russian occupation to the present, Ankara), 2006 (in Turkish)
12. Swetojhowski T., Müsülman Jemaatten Ulusal Kimlighe Rus Azerbayjani, 1905-1920, Istanbul, (Russian Azerbaijan 1905-1925, The Shaping of National Identity in a Muslim Community), 1988 (in Turkish)
13. Tokluoghlu J., Ziya Ġökalp: Turanjiliktan Türkchülüghe, Atatürk arashtirma merkezi Derġisi, (Ziya Gökalp: from Turanism to, The journal of Ataturk Research Center), Cilt XXVIII-Sayı 84, s.104-143, 2012 (in Turkish)
14. Turan A., Äli Bäy Hüseynzadä, (Ali Bey Huseynzade) Moskva, 2008 (in Azerbaijani)
15. Uja A., Ziya Ġökalp ve ona türkchülüghü ashilayan Adam:Hüseynzade Ali Bey, Atatürk Üniversitesi Türkiyat Arashtırmaları Enstitüsü Derġisi, (Ziya Gökalp and the person who instilled Turkishness in him: Hüseynzade Ali Bey, Aataturk University Press,Turcology Research), Sayi 8, 2010 (in Turkish)

РЕЗЮМЕ
О ФОРМИРОВАНИИ САМОСОЗНАНИЯ АЗЕРБАЙДЖАНЦЕВ КАК ЭТНИЧЕСКОЙ ОБЩНОСТИ

Погосян Астгик
аспирантка кафедры тюркологии факультета востоковедения
Ереванского государственного университета
Республика Армения

Привитие самосознания нынешним азербайджанцам, кавказским тюркам, как этнической общности, совпадающее с процессами нациестроительства, происходящими на мировой арене, явно несет османо-турецкое влияние. Наиболее ранним образом этот процесс проявился у кавказских тюрков с преобладанием этнического общинного сознания над религиозного самосознания, исходя из тезиса о принадлежности азербайджанцев к пантюркистской семье. По этому можно сказать, что "зародыш" самосознания у азербайджанцев был связан с пантюркистскими идеями. Одним из первых ключевых идеологов пантюркизма был писатель, общественный и политический деятель азербайджанского происхождения Али-бек Гусейнзаде, оставивший большой след в объединении кавказских тюрков, а также в дальнейшем развитии и кристаллизации идеологии. Отец пантюркизма социолог Зия Гёкальп, являясь носителем мировоззрения Али Гусейнзаде, поднял на новый уровень идеологию пантюркизма, наметив тем самым идеологию дальнейшего развития турецкого и азербайджанского

государств. Взгляды именно этих деятелей Мутафа Кемал Ататюрк использовал в 1923 году как основу идеологии Турецкой Республики. На фоне современных геополитических трансформаций новые элементы пантюркизма ярко проявляются во внешней политике Турции и Азербайджана, в том числе, и против Армении.

Ключевые слова: самопознание, пантюркизм, национальное строительство, просвещение, джихадистское движение, Али бек Гусейнзаде, Зия Гокалп.

SUMMARY

THE FORMATION OF SELF-IDENTITY AMONG AZERIS AS ETNIK COMMUNITY

Poghosyan Astghik

Yerevan State University,
Faculty of Oriental Studies,
Chair of Turkish Studies, Ph.D Student,
Yerevan, the Republic of Armenia

The emergence of the consciosness of ethnic community as a form of self-identity among the Caucasian Turks or present-day Azeris, coinciding with the processes of nation-building taking place in the global arena, obviously bears Ottoman-Turkish influence as well. At an early stage of the process ethnic community consciousness became predominant instead of the religious self-consciousness among Caucasian Turks, based on the thesis that Azeris are part of the pan-Turkic family. Accordingly we can say that birth of self-identity among the Azerbaijanis is closely attached to the pan-Turkic ideas. One of the first key ideologues of Pan-Turkism is azeri writer, public and political figure Ali Bey Huseynzade, who left a significant mark on the unification of Caucasian Turks, as well as on the further development and crystallization of the ideology. The father of pan-Turkism sociologist Ziya Gökalp, under the ideological influence of Ali Huseinzadeh, raised the ideology of panturkism to a new level, outlining the future ideological path of the turkish and azerbaijani states. The views of these intellectuals were implemented as the basis of the state ideology of Republic of Turkey by Mustafa Kemal Atatürk in 1923. In the context of current geopolitical transformations, the contemporary ellements of pan-Turkism are vividly reflected in the foreign policy of neighboring Turkey and Azerbaijan, including their policy against RA.

Key words: self-knowledge, pan-Turkism, nation-building, enlightenment, Jadist movement, Ali bey Huseynzade, Ziya Gokalp.